

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ
ԱՄԲԻՈՆ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՅԻԿ ՄՈԴՈՒԼ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ ԵՎ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1814B3/06
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<p>ՁԵՎԱՎՈՐԵԼ</p> <p>Հստակ պատկերացումներ համաշխարհային գրականության ակունքների, նրա զարգացման առավել կարևոր շրջանների և զարգացման ուղղությունների մասին, որոնք կազմում են ամեն մի բանասիրական ուսումնառության կարևոր բաղադրիչը:</p>
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<p>ԳԻՏԵԼԻՔ</p> <p>գրականագիտական առավել ընդհանուր և անհրաժեշտ պատկերացումներ համաշխարհային գրական գործընթացների մասին:</p> <p>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ</p> <p>Գրական երկերը կարդալու և ընկալելու, ներառարկայական և միջառարկայական կապեր ստեղծելու ունակություն:</p> <p>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ</p> <p>Գրական երկի վերլուծություն: Առարկայի ընձեռած հնարավորությունները ուսումնադաստիարակչական և հաղորդակցական գործունեության մեջ կիրառելու կարելիություն:</p>
ԴԱՍԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ	<ul style="list-style-type: none"> • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 2 • ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄ -32 • ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ -16 • ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 16 • ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ -2

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Ավագ դպրոցում ստացած գրականագիտական գիտելիքները :

ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Դասախոսություն, ուսումնառության բուրգ
քննարկումներ
տեսադիտումներ
ինքնուրույն աշխատանք

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Գրականության պատմությունը որպես գիտաճյուղ, նրա հիմնական հասկացությունները: Արտասահմանյան գր-թյան տեղը գր. պատմ. մեջ :
- Անտիկ դիցաբանական մտածողությունը և նրա զարգացման փուլերը: Նրա նշանակությունը: <<Իլիական>>, <<Ոդիսական>>: Հոմերոսյան խնդիրը:
- Անտիկ լիբիկան, նրա հիմնական ժանրային ձևերն ու տեսակները, ներկայացուցիչները:
- Անտիկ դրաման, նրա ակունքները: Անտիկ թատրոնի տեղն ու դերը հասարակական կյանքում: Գլխավոր ներկայացուցիչները՝ Էսքիլոս, Սոփոկլես, Եվրիպիդես:
- Միջնադարյան գրականությունների զարգացման հիմնական գործոնները, բանահյուսական ձևեր/ ֆր., գերմ. և իսպ. վիպերգերի արժևորումը/:
- Վերածնունդ և Ռեֆորմացիա, նրա դրսևորումները իտալական գրականության մեջ/ Դանթե, Պետրարկա, Բոկաչիո/:
- Վերածնունդը Ֆրանսիայում, Ռաբլեի ստեղծագործության արժևորումը:
- Իսպանական գրականությունը 17-րդ դարում, Սերվանտես, Լոպե դե Վեգա:
- Կլասիցիզմը իբրև գեղարվեստական ուղղություն, նրա ներկայացուցիչները:
- 18-րդ դարը եվրոպական գրականության մեջ, Վոլտերի և Գյոթեի ստեղծագործությունը:
- 19-րդ դարի 1-ին կեսը եվրոպական գրականություններում: Ռոմանտիզմ և ռեալիզմ:
- 19-րդ դարի 2-րդ կեսը եվրոպական գրականություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ

1. Ն.Խաչատրյան, Անտիկ գրականության պատմություն, Ե., 2002, : www.aniedu.am
2. Արևմտաեվրոպական գրականության պատմություն, 1-ին մաս, Վաղ միջնադար, Ե., 1949:
3. Մամիկոնյան Հ., Արտասահմանյան գրականություն, 1961, :
4. Դասախոսությունների փաթեթ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ

Օրագրային այն երկերը, որոնք հիշատակվում են:

ՄՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՁԵՎԵՐԸ

Ամփոփիչ գրավոր ստուգում:
Ամփոփիչ ստուգումը գրավոր է՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Քննական հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 30, 30, 40 միավորային արժեքով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ
ԵՎ ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1 10 % /հաճախումներ/
2. Բաղադրիչ 2 70% /ամփոփիչ ստուգում/
3. Բաղադրիչ 3 20% /ընթացիկ ակտիվություն/

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պատճենակերպի նկարագրերը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A-	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B-	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C-	3-
Մինչև 39	D	2

Հ/Հ	Թ Ե Մ Ա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	սեմինար	Ուս. պրակտիկա		
1.	Կուն, Հին Հունաստանի լեզուներն ու առասպելները/«Աստվածներ և հերոսներ»>>շարքը/:	2					2	4
2.	«Իլիական» պոեմում առանձնացնել գրականագիտական հասկացությունները՝ սյուժե, կերպար, բախում , հետահայաց ֆաբուլա:	2					2	4
3.	Անտիկ, միջն., Վերածննդի գրակ.,Ե., 1990/ Անտիկ լիբրիկան/:	2					1	3
4.	Հույն ողբերգակներ, Ե., 1990: Աշխատանք բնագրի վրա:	2					3	5
5.	Անտիկ, միջն., Վերածննդի գրակ.,Ե., 1990/ Անտիկ կատակերգությունը/:	2					1	3
6.	Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրությունները»>>: Աշխատանք բնագրի վրա:				2		1	3
7.	Անտիկ գրականության քրեստոմատիա, մաս 2/ Վերգիլիոս, Հորացիոս, Օվիդիոս/:				2		3	5
8.	Ռոլանդի երգը, Նիբելունգների երգը: Աշխատանք բնագրի վրա:				2		2	4
9.	Դանթե, Աստվածային կատակերգություն Պետրարկա, Երգերի գիրք Բոկաչիո, Դեկամերոն/:				2		3	5
10.	Ֆրանսուա Ռաբլե, «Գարգանտյուա և Պանտագրյուել»>>:				2		3	5

11.	Սերվանտես, Դոն Կիխոտ: Աշխատանք բնագրի վրա:	2					4	6
12.	Լուպե դե Վեգա, Սևիլիայի աստղը:			2			2	4
13.	<<Ֆրանսիական կլասիցիզմ>>, Ե., 1982:	2					2	4
14.	Վոլտեր, <<Կանդիդ>>, <<Չաղիգ>> փիլ-կան վեպերը: Գյոթե, <<Ֆաուստ>>:			2			4	6
15.	Բալզակ, <<Հայր Գորիո>> վեպը: Ստենդալի <<Կարմիրն ու սևը>>:			2			6	8
16.	Աշխատանք բնագրի վրա/ Պոլ վեռլենը տարբեր գրողների թարգմանությամբ/:	2					1	3
Անփոփիչ գրավոր ստուգում:								6
Ընդամենը								